ՀԱՅԱՍՏԱՆԻ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

ԱՐՑԱԽԻ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԼՂՀ, ք.Ստեփանակերտ «14»-ը նոյեմբերի 2019թ.

Կարևորելով Արցախ և մայր հայրենիք Հայաստան անքակտելի կապը՝ հնարավոր բոլոր ոլորտներում և ուղղություններով,

Նպատակ ունենալով մշակել և իրագործել Արցախի հանրային հեռուստառադիոընկերության վերածննդի իրատեսական և օպտիմալ ծրագիր,

Գիտակցելով Հայաստանի հանրային հեռուստաընկերության՝ որպես Եվրոպական հեռարձակողների միության անդամի, հայաստանյան առաջատար հեռուստաընկերության անգնահատելի փորձը, որի փոխանցումն Արցախի հանրային հեռուստառադիոընկերությանը շոշափելիորեն կնպաստի Արցախի հանրային հեռուստառադիոընկերության համար հեռանկարային գործունեության ծրագրի մշակման և իրականացման հարցում,

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Հանրային հեռուստաընկերություն), ի դեմս գործադիր տնօրեն Մարգարիտա Գրիգորյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից և

«Արցախի հանրային հեռուստառադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Արցախի հանրային հեռուստառադիոընկերություն), ի դեմս գործադիր տնօրեն Մերի Դավթյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),
կնքեցին սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՆՊԱՏԱԿԸ

1.1. Հուշագրի նպատակն է համատեղել Կողմերի ջանքերը Արցախի հանրային հեռուստառադիոընկերությունը միջազգային ստանդարտներին և ժամանակի հրամայականին համապատասխան հեռուստառադիոընկերության կերպարանափոխելու հարցում՝ ապահովելով դրա լրիվ համապատասխանությունը հեռուստաարտադրության նորարական գաղափարներին, վերջին սերնդի տեխնիկական պահանջներին, Արցախի Հանրապետության օրենսդրական պահանջներին, ինչպես նաև երաշխավորելով հեռուստառադիոընկերության աշխատանքներում ներգրավված կադրերի բավարար մասնագիտական պատրաստվածությունը հեռուստաարտադրության վերջին տենդենցներին համապատասխան արտադրանք ստեղծելու և հեռուստառադիոընկերության վարչական աշխատանքը կիրառելի օրենսդրության պահանջներին, միջազգային ստանդարտներին համապատասխան կազմակերպելու հարցում:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Հանրային հեռուստաընկերությունը պարտավորվում է լրիվ և բազմակողմանի ուսումնասիրության ենթարկել Արցախի հանրային հեռուստառադիոընկերության ողջ գործունեությունը՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով տեխնիկական և տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության, հեռուստաարտադրության, ֆինանսական, մարդկային ռեսուրսների կառավարման, իրավական սպասարկման և այլ ոլորտների տեսանկյունից: Կատարված ուսումնասիրության հիման վրա պատրաստել բիզնես վերլուծություն, որով կներկայացվեն ինչպես առկա մարտահրավերների, այնպես էլ ստեղծված խնդիրների համապատասխան լուծումներ՝ հեռուստառադիոընկերության օպտիմալ կազմակերպչական կառուցվածքի, հաստիքացուցակի, անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության և որպես ելակետային սկիզբ պարտադիր իրականացման ենթակա աշխատանքների տեսքով:

2.2. Հանրային հեռուստաընկերությունը պարտավորվում է պարբերական կերպով Կողմերի կողմից առանձին համաձայնեցված ձևաչափով շարունակական աջակցություն ցուցաբերել Արցախի հանրային հեռուստառադիոընկերությանը Հանրային հեռուստաընկերության կողմից կատարված ուսումնասիրության արդյունքով կազմված բիզնես վերլուծության կյանքի կոչման հարցում՝ մատուցելով մասնագիտական խորհրդատվություն՝ անհրաժեշտության դեպքում Արցախի հանրային հեռուստառադիոընկերություն գործուղելով Հանրային հեռուստաընկերության կոմպետենտ աշխատակիցներին, տրամադրելով նյութեր, դրանք տեղայնացնելու ուղղություն, լուծումներ և այլն:

2.3. Հանրային հեռուստաընկերությունը պարտավորվում է ընդունել և Հանրային հեռուստաընկերությունում անհատույց կերպով վերապատրաստել բավարար մասնագիտական հենք ունեցող Արցախի հանրային հեռուստառադիոընկերության այն խոստումնալից կադրերին, որոնք ըստ իր մասնագիտական հայեցողական կարծիքի կկարողանան հաղթահարել այդպիսի վերապատրաստման ծրագրերը և իրենց ամենօրյա աշխատանքով նպաստել Արցախի հանրային հեռուստառադիոընկերության գործունեությունն արդյունավետ կազմակերպելու և դրա զարգացումը խթանելու հնարցում:

2.4. Հանրային հեռուստաընկերությունը պարտավորվում է ըստ պահանջի աջակցել Արցախի հանրային հեռուստառադիոընկերությանն արդյունավետ կադրային քաղաքականություն վարելու, հեռուստառադիոընկերությունում անհրաժեշտ սերնդափոխությունն ապահովելու նպատակով համապատասխան կադրեր ներգրավելու հարցում:

2.5. Արցախի հանրային հեռուստառադիոընկերությունը պարտավորվում է ողջամտության սահմաններում Հանրային հեռուստաընկերությանն ապահովել սույն Հուշագրով Հանրային հեռուստաընկերության համար սահմանված պարտականությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ բոլոր պայմաններով, այդ թվում, բայց չսահմանափակվելով՝ տրամադրել ճշմարտացի և ամբողջական տեղեկատվություն, ապահովել ըստ ուղղությունների կոմպետենտ աշխատակիցների համագործակցությունը Հանրային հեռուստաընկերության համապատասխան աշխատակիցների հետ և այլն:

3. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Կողմերը նախատեսում են համագործակցել Հուշագրում նշված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:
3.2. Կողմերը համաձայնվում են ձեռնարկել բոլոր միջոցները Հուշագրով ստանձնած համագործակցությունը բարեխղճորեն, Կողմերի միջև առանձին համաձայնեցված ժամկետներում կատարելու համար:

4. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՓՈՓՈԽՈՒՄԸ, ԼՐԱՑՈՒՄԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

4.1. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:
4.2. Հուշագիրը կարող է դադարեցվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ ցանկացած պահի: Հուշագիրը կարող է նաև դադարեցվել միակողմանիորեն՝ այդ մասին մյուս կողմին առնվազն 2 (երկու) ամիս առաջ տեղեկացնելու պայմանով:
4.3. Հուշագրի դադարեցումը չպետք է ազդի դրա գործողության ընթացքում սկսված ծրագրի կամ միջոցառումների արդյունավետ և վերջնական իրականացման վրա, եթե Կողմերի միջև այլ համաձայնություն ձեռք չի բերվել:
4.4. Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են իրականացվել ցանկացած Կողմի նախաձեռնությամբ, սակայն մյուս Կողմի գրավոր համաձայնությամբ:
4.5. Բոլոր այն հարցերը, որոնք կարգավորված չեն Հուշագրով, կարգավորվում են Կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրերի կնքման միջոցով, որոնք կկազմեն Հուշագրի անբաժանելի մասը:

5. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

5.1. Կողմերն արձանագրում են, որ սույն Հուշագրով պայմանավորված համագործակցության ընթացքում փոխանակվող տեղեկությունները, անկախ փոխանակման ձևից (թղթային, էլեկտրոնային կամ այլ) և բովանդակությունից, բացառությամբ զանգվածային տեղեկատվության միջոցներում առկա տեղեկատվության (եթե այդպիսին առկա է), գաղտնի է և չի կարող տրամադրվել որևէ երրորդ կողմի, բացառությամբ մյուս Կողմի նախապես տրամադրված գրավոր համաձայնության:
5.2. Կողմերը պարտավոր են սույն Հուշագրի գործողության, ինչպես նաև դրան հաջորդող 3 (երեք) տարիների ընթացքում, ապահովել համապատասխան տեղեկատվության գաղտնիությունը և պատշաճ պաշտպանությունը՝ գործադրելով առնվազն այնպիսի ջանքեր, ինչպիսիք կգործադրեին իրենց իսկ նման տեղեկատվության պաշտպանության համար:

6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Կողմերն արձանագրում են, որ սույն Հուշագրով պայմանավորված՝ համագործակցության շրջանակներում հեղինակային և հարակից իրավունքների օբյեկտների տրամադրումը չի ենթադրում այդ օբյեկտների նկատմամբ իրավունքների փոխանցում:
6.2. Սույն Հուշագրով պայմանավորված համագործակցության շրջանակներում Հանրային հեռուստաընկերության կողմից նշանակված աշխատանքների համակարգողն է՝ Հանրային հեռուստաընկերության աշխատակազմի ղեկավար Նազելի Նիկողոսյանը, իսկ Արցախի հանրային հեռուստառադիոընկերության կողմից՝ հեռուստառադիոընկերության գործադիր տնօրեն Մերի Դավթյանը:
6.3. Հուշագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է Հուշագրի մեկական օրինակ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝
Մարգարիտա Գրիգորյան

«Արցախի հանրային հեռուստառադիոընկերություն» ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝
Մերի Դավթյան